ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՍԻՓԱՆԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատ մարզի Սիփանիկ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ. Սիփանիկ,

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

11 դեկտեմբերի 2012թվականի N 9-Ն

ՍԻՓԱՆԻԿ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2013Թ. ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԸ և ՎՃԱՐՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը

Հաստատել Սիփանիկ համայնքում 2013թ-ի համար սահմանված հետևյալ տեղական տուրքերի և վճարների տեսակները և դրույքաչափերը.

Տեղական տուրքեր

1. ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան նոր շենքերի, շինությունների /նեռարյալ ոչ հիմնական / շինարարության /տեղադրման/ թույլտվության համար տեղական տուրքը սահմանել.

Հիմնական օբյեկտների համար.

1) մինչև 300քմ ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի տների, ինչպես նաև 200քմ ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար - 15000 դրամ

2) սույն կետի 1) ենթակետով չնախատեսված օբյեկտների համար.

ա. 201-500քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար - 30000 դրամ

բ. 501-1000 քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար -50000 դրամ

գ. 1001 և ավելի քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար -70000 դրամ

Ոչ հիմնական շինությունների տեղադրման համար.

3) մինչև 20քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար 3000 դրամ

4) 20 և ավելի քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար 5000 դրամ

2.Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար 5000 դրամ:

3.Համայնքի տարածքում ոգելից խմիչքի վաճառքի թույլտվության համար հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում յուրաքանչյուր եռամսյակի համար տեղական տուրքը սահմանել 4000 դրամ:

4. Համայնքի տարածքում ծխախոտի վաճառի թույլտվության համար հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում յուրաքանչյուր եռամսյակի համար տեղական տուրքը սահմանել 1750 դրամ:

5. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը սահմանել 500 դրամ:

1-ին, 2-րդ և 3-րդ կետերի համար կիռառել 0.5 գործակիցը:

Տեղական վճարներ

1. Համայնքի տարածքում մրցույթների և աճուրդների մասնակցության տեղական վճարը սահմանել 3000 դրամ:

Կողմ -3 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԽՈՍՐՈՅԱՆ ԲԱԳՐԱՏ

2. ՄԱՆՈՒԿՅԱՆ ԽԱՆՋԱՆ

3. ՓՈՒՐԹՈՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐԱՅԻԿ ՄԱՆՈՒԿՅԱՆ